ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 օգոստոսի 2012 թվականի N 132-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի զորահավաքային պլանի կազմումը սահմանված ժամկետում ավարտելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Մինչև 2012 թվականի օգոստոսի 31-ը կազմել և հաստատել համայնքների և համայնքների վարչական սահմաններում գտնվող կազմակերպությունների զորահավաքային պլանները:

2) Հաստատված զորահավաքային պլանները մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի զորահավաքային մարմնին՝ մարզի զորահավաքային պլանը կազմելու համար:

2. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Է. Հովհաննիսյանի վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ